Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում թեթեւ մարդատար ավտոմոբիլների երթեւեկությունը ճանապարհներին՝ բնակավայրերից դուրս:

1.110 կմ/ժ:
2.100 կմ/ժ:
3.90 կմ/ժ:
4.80 կմ/ժ:
5.70 կմ/ժ:

Պատ.՝3

Կահավորված թափքում մարդ փոխադրող բեռնատար ավտոմոբիլների երթեւեկությունը թույլատրվում է ոչ ավելի քան՝

1.60 կմ/ժ արագությամբ:
2.70 կմ/ժ արագությամբ:
3.80 կմ/ժ արագությամբ:

Պատ.՝1

Այս նախազգուշացնող նշանը բնակավայրերից դուրս, մինչեւ վտանգավոր հատվածի սկիզբը ի՞նչ հեռավորության վրա է տեղադրվում:

1.50 - 100 մ:
2.150 - 300 մ:
3.300 - 500 մ:

Պատ.՝2

Երեխաների կազմակերպված խմբեր փոխադրող տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է՝

1.60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
2.70 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
3.80 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Պատ.՝1

Տրանսպորտային միջոցների երթեւեկությունը բնակավայրերում թույլատրվում է՝

1.60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
2.80 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
3.90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Պատ.՝1

Ո՞ր ուղղությամբ է թույլատրվում երթեւեկությունը:



1.Միայն ուղիղ:
2.Ուղիղ եւ դեպի աջ:
3.Ուղիղ, դեպի աջ եւ դեպի ձախ:
4.Բոլոր ուղղություններով:

Պատ.՝3

Միջքաղաքային ավտոբուսների երթեւեկությունը բնակավայրերից դուրս թույլատրվում է՝

1.70 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
2.90 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:
3.110 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Պատ.՝2

Ի՞նչ արագությամբ է թույլատրվում երթեւեկել 3.5 տ ոչ ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլներով՝ բնակավայրերից դուրս:

1.90 կմ/ժ արագությունից ոչ ավելի:
2.70 կմ/ժ արագությունից ոչ ավելի:
3.80 կմ/ժ արագությունից ոչ ավելի:

Պատ.՝1

Թույլատրվու՞մ է արդյոք մերձքաղաքային, միջմարզային եւ միջքաղաքային ավտոբուսների վարորդներին բնակավայրերում գերազանցել 60 կմ/ժ արագությունը:

1.Թույլատրվում է՝ միայն միեւնույն ուղղությամբ երկու եւ ավելի գոտի ունեցող ճանապարհներին:
2.Թույլատրվում է:
3.Արգելվում է:

Պատ.՝3

Թույլատրվու՞մ է արդյոք միջքաղաքային ավտոբուսի վարորդին բնակավայրերից դուրս գերազանցել 70 կմ/ժ արագությունը:

1.Թույլատրվում է՝ միայն երթեւեկության համար տվյալ ուղղությամբ երկու եւ ավելի գոտի ունեցող ճանապարհներով երթեւեկելիս:
2.Թույլատրվում է, եթե չի գերազանցում 90 կմ/ժ արագությունը:
3.Արգելվում է:

Պատ.՝2

Քարշակման ժամանակ վթարային լուսային ազդանշանի բացակայության կամ անսարքության դեպքում, «Վթարային կանգառ» նշանը տեղադրվում է՝

1.Քարշակվող տրանսպորտային միջոցի հետեւի մասում:
2.Քարշակող տրանսպորտային միջոցի առջեւի մասում:
3.Վարորդի հայեցողությամբ՝ տրանսպորտային միջոցներից մեկի վրա՝ տեսանելի տեղում:

Պատ.՝1

Կոշտ կցիչով քարշակման ժամանակ տրանսպորտային միջոցների միջեւ հեռավորությունը չպետք է գերազանցի՝

1.2 մ:
2.3 մ:
3.4 մ:
4.5 մ:
5.6 մ:

Պատ.՝3

Թույլատրվու՞մ է արդյոք կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ մարդկանց փոխադրումը բեռնատար ավտոմոբիլի թափքում՝

1.Թույլատրվում է քարշակող եւ քարշակվող ավտոմոբիլների թափքում:
2.Թույլատրվում է միայն քարշակվող ավտոմոբիլի թափքում:
3.Թույլատրվում է միայն քարշակող ավտոմոբիլի թափքում:
4.Երկու ավտոմոբիլների թափքում էլ արգելվում է:

Պատ.՝3

Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ նշվածներից ո՞ր դեպքում է թույլատրվում մարդկանց փոխադրումը քարշակվող ավտոմոբիլում:

1.Թույլատրվում է ավտոբուսում:
2.Թույլատրվում է թեթեւ մարդատար ավտոմոբիլում:
3.Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլի թափքում՝ կոշտ կցիչով քարշարկելիս:

Պատ.՝2

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթեւեկությունը՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներով քարշակում կատարելիս:

1.30 կմ/ժ:
2.40 կմ/ժ:
3.50 կմ/ժ:
4.60 կմ/ժ:
5.70 կմ/ժ:

Պատ.՝3

Քարշակումը մերկասառույցի պայմաններում արգելվում է՝

1.Ճկուն կցիչով:
2.Կոշտ կցիչով:
3.Մասնակի բեռնման եղանակով:

Պատ.՝1

Ինչպիսի՞ առավելագույն արագությամբ կարող է իրականացվել քարշակումը տվյալ պայմաններում:



1.30 կմ/ժ:
2.50 կմ/ժ:
3.70 կմ/ժ:
4.80 կմ/ժ:

Պատ.՝2

Թույլատրվու՞մ է արդյոք ճկուն կամ կոշտ կցիչով քարշակման դեպքում մարդկանց փոխադրումը քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցում:

1.Թույլատրվում է՝ ավտոբուսում եւ տրոլեյբուսում:
2.Թույլատրվում է՝ միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլում:
3.Թույլատրվում է՝ բեռնատար ավտոմոբիլի թափքում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում:
4.Թույլատրվում է՝ բեռնատար ավտոմոբիլի խցիկում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում:
5.Արգելվում է:

Պատ.՝4

Քարշակումը մերկասառույցի պայմաններում՝

1.Արգելվում է:
2.Թույլատրվում է:
3.Թույլատրվում է՝ կոշտ կցիչով կամ մասնակի բեռնման եղանակով քարշակելիս:

Պատ.՝3

Ինչպիսի՞ առավելագույն արագությամբ է թույլատրվում տրանսպորտային միջոցների քարշակումը ճկուն կցիչով:

1.70 կմ/ժ:
2.60 կմ/ժ:
3.50 կմ/ժ:
4.40 կմ/ժ:
5.30 կմ/ժ:

Պատ.՝3

Ո՞ր դեպքում է արգելվում քարշակումը:

1.Մերկասառույցի պայմաններում՝ կոշտ կցիչով:
2.Մերկասառույցի պայմաններում՝ ճկուն կցիչով:
3.Կողային կցորդով մոտոցիկլներով:

Պատ.՝2

Բնակավայրերից դուրս մեխանիկական տրանսպորտային միջոցներ քարշակելիս երթեւեկության արագությունը չպետք է գերազանցի՝

1.30 կմ/ժ:
2.40 կմ/ժ:
3.50 կմ/ժ:
4.60 կմ/ժ:
5.70 կմ/ժ:

Պատ.՝3

Թույլատրվու՞մ է արդյոք մոտոցիկլների քարշակումը:

1.Թույլատրվում է՝ կողային կցորդով մոտոցիկլների քարշակումը:
2.Թույլատրվում է՝ առանց կողային կցորդի մոտոցիկլների քարշակումը:
3.Թույլատրվում է՝ երկու դեպքում էլ:

Պատ.՝1

Քարշարկման ժամանակ տրանսպորտային միջոցների միջեւ ի՞նչ հեռավորություն պետք է ապահովի ճկուն կցիչը:

1.1 - 3 մ:
2.2 - 4 մ:
3.3 - 6 մ:
4.4 - 6 մ:
5.4 - 8 մ:

Պատ.՝4

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում կցորդ քարշակող թեթեւ մարդատար ավտոմոբիլների երթեւեկությունն ավտոմայրուղիներով երթեւեկելիս:

1.110 կմ/ժ:
2.100 կմ/ժ:
3.90 կմ/ժ:
4.80 կմ/ժ:
5.70 կմ/ժ:

Պատ.՝3

Կոշտ կցիչով քարշակման ժամանակ հեռավորությունը տրանսպորտային միջոցների միջեւ պետք է լինի ոչ ավելի՝

1.4 մ-ից:
2.5 մ-ից:
3.6 մ-ից:

Պատ.՝1

Մեխանիկական տրանսպորտային միջոցների մասնակի բեռնումով քարշակման ժամանակ ուղեւորների փոխադրում թույլատրվում է՝

1.Քարշակող ավտոմոբիլի թափքում:
2.Քարշակվող ավտոմոբիլի խցիկում:
3.Քարշակվող ավտոմոբիլի թափքում:
4.Քարշակող ավտոմոբիլի խցիկում:

Պատ.՝4

Թույլատրվու՞մ է արդյոք քարշակել կողային կցորդով մոտոցիկլները:

1.Թույլատրվում է՝ միայն կոշտ կցիչով:
2.Արգելվում է:
3.Թույլատրվում է:

Պատ.՝3

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթեւեկությունը ճկուն կցիչով քարշակելիս:

1.70 կմ/ժ:
2.60 կմ/ժ:
3.50 կմ/ժ:
4.40 կմ/ժ:
5.30 կմ/ժ:

Պատ.՝3

Տրանսպորտային միջոցի վրա բեռը տեղաբաշխվում եւ անհրաժեշտության դեպքում նաեւ ամրացվում է այնպես, որպեսզի՝

1.Չցցվի հարթակի կողերից բարձր:
2.Զգալի աղմուկ չհանի, փոշի չբարձրացնի կամ չաղտոտի ճանապարհն ու շրջակա միջավայրը:
3.Դուրս չցցվի տրանսպորտային միջոցի հետեւի եզրից 0,8 մ-ից ավելի:

Պատ.՝2

Թեթեւ մարդատար ավտոմոբիլի առջեւի նստատեղին, եթե այն կահավորված չէ երեխաներին պահող հարմարանքով, թույլատրվում է փոխադրել երեխաներ, եթե լրացել է նրանց՝

1.10 տարին:
2.11 տարին
3.12 տարին:

Պատ.՝3

Թույլատրվու՞մ է արդյոք մարդկանց փոխադրումը բեռնատար կցորդում:

1.Արգելվում է:
2.Թույլատրվում է:
3.Թույլատրվում է՝ միայն բեռն ուղեկցող անձանց:

Պատ.՝1

Թույլատրվու՞մ է արդյոք մինչեւ 12 տարեկան երեխաների փոխադրումը մոտոցիկլի հետևի նստատեղին:

1.Թույլատրվում է:
2.Արգելվում է:

Պատ.՝2

Թույլատրվու՞մ է արդյոք երթեւեկության ժամանակ մարդկանց գտնվելը բեռնատար ավտոմոբիլի թափքում, եթե այն կահավորված չէ մարդկանց փոխադրելու համար:

1.Արգելվում է:
2.Թույլատրվում է՝ ավտոմայրուղի չհամարվող ճանապարհներին:
3.Թույլատրվում է՝ միայն բեռն ուղեկցող կամ այն ստանալու համար մեկնող անձանց՝ այն պայմանով, որ նրանք ապահովված են ավտոմոբիլի կողերի մակարդակից ցածր տեղադրված նստարաներով:

Պատ.՝3

Մարդկանց փոխադրումը բեռնատար կցորդում՝

1.Արգելվում է:
2.Թույլատրվում է:
3.Թույլատրվում է միայն բեռն ուղեկցող անձանց:

Պատ.՝1

Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ թույլատրվու՞մ է արդյոք մարդկանց փոխադրումը քարշակվող ավտոբուսում:

1.Թույլատրվում է:
2.Թույլատրվում է մինչեւ 8 ուղեւոր:
3.Արգելվում է:

Պատ.՝3

Ավտոբուսի քարշակումը մերկասառույցի պայմաններում արգելվում է՝

1.Ճկուն կցիչով:
2.Կոշտ կցիչով:

Պատ.՝1

Թույլատրվու՞մ է արդյոք ճկուն կամ կոշտ կցիչով քարշակման դեպքում մարդկանց փոխադրումը քարշակվող մեխանիկական տրանսպորտային միջոցում:

1.Թույլատրվում է ավտոբուսում եւ տրոլեյբուսում:
2.Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլի խցիկում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում:
3.Թույլատրվում է բեռնատար ավտոմոբիլի թափքում եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլում:
4.Արգելվում է:

Պատ.՝2

Մարդկանց փոխադրումն արգելվում է, եթե՝

1.Զբոսաշրջության երթուղիներով երթեւեկող ավտոբուսի սրահում մարդկանց թիվը գերազանցում է կահավորված նստատեղերի քանակը:
2.Միջքաղաքային երթուղիներով երթեւեկող ավտոբուսի սրահում մարդկանց թիվը գերազանցում է կահավորված նստատեղերի քանակը:
3.Երկու դեպքում էլ:

Պատ.՝3

Ավտոբուսով երեխաների կազմակերպված խմբեր փոխադրելիս սրահում պետք է գտնվի առնվազն՝

1.Մեկ չափահաս ուղեկցող:
2.Երկու չափահաս ուղեկցող:
3.Երեք չափահաս ուղեկցող:

Պատ.՝1

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթեւեկել միջմարզային եւ միջքաղաքային ուղեւորափոխադրումներ իրականացնող ավտոբուսներին՝ բնակավայրերից դուրս բոլոր ճանապարհներին:

1.60 կմ/ժ:
2.70 կմ/ժ:
3.90 կմ/ժ:

Պատ.՝3

Թույլատրվու՞մ է արդյոք ավտոբուսներին բնակավայրերից դուրս երթեւեկել 70 կմ/ժ արագությամբ:

1.Թույլատրվում է:
2.Արգելվում է:

Պատ.՝1

Միջքաղաքային փոխադրումներ իրականացնող ավտոբուսների երթեւեկությունը բնակավայրերում թույլատրվում է ոչ ավելի քան՝

1.60 կմ/ժ:
2.70 կմ/ժ:
3.90 կմ/ժ :

Պատ.՝1

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում միջքաղաքային փոխադրումներ իրականացնող ավտոբուսների երթեւեկությունը բնակավայրերից դուրս՝

1.60 կմ/ժ:
2.70 կմ/ժ:
3.90 կմ/ժ:

Պատ.՝3

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում ավտոբուսների երթեւեկությունը «Բնակելի գոտի» եւ «Բնակելի գոտու վերջը» նշաններով կահավորված տարածքներում:

1.20 կմ/ժ:
2.30 կմ/ժ:
3.40 կմ/ժ:

Պատ.՝1

Թույլատրվու՞մ է արդյոք կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ մարդկանց փոխադրումը քարշակվող ավտոբուսում:

1.Թույլատրվում է:
2.Արգելվում է:

Պատ.՝2

Կահավորված թափքում մարդկանց փոխադրելու դեպքում բեռնատար ավտոմոբիլի վարորդը պարտավոր է երթեւեկել ոչ ավելի քան՝

1.50 կմ/ժ արագությամբ:
2.60 կմ/ժ արագությամբ:
3.70 կմ/ժ արագությամբ:

Պատ.՝2

Թույլատրվու՞մ է արդյոք ուղեւորների փոխադրումը քարշակող ավտոբուսում:

1.Արգելվում է:
2.Թույլատրվում է:

Պատ.՝2

Այս նշանի առկայության դեպքում ի՞նչ առավելագույն արագությամբ երթեւեկելու իրավունք ունեն միջքաղաքային ավտոբուսների վարորդները:

1.70 կմ/ժ:
2.90 կմ/ժ:
3.110 կմ/ժ:

Պատ.՝2

Ի՞նչ առավելագույն արագությամբ կարող է երթեւեկել քարշակող ավտոբուսի վարորդը տվյալ իրավիճակում:

1.50 կմ/ժ:
2.60 կմ/ժ:
3.90 կմ/ժ:

Պատ.՝1

Ի՞նչ առավելագույն արագությամբ կարող է երթեւեկել միջքաղաքային ավտոբուսի վարորդը տվյալ իրավիճակում:

1.60 կմ/ժ:
2.70 կմ/ժ:
3.80 կմ/ժ:
4.90 կմ/ժ:

Պատ.՝4

Ի՞նչ արագությամբ կարող է շարունակել երթեւեկությունը ավտոբուսի վարորդը տվյալ ճանապարհային նշանով նշված գոտում:

1.60 կմ/ժ-ից պակաս:
2.Ոչ պակաս 60 կմ/ժ, բայց ոչ ավելի քան 70 կմ/ժ:
3.Ոչ պակաս 60 կմ/ժ բայց ոչ ավելի քան 90 կմ/ժ:

Պատ.՝3

Այս նշանով կահավորված ճանապարհներին միջքաղաքային ավտոբուսների վարորդներն իրավունք ունեն երթեւեկելու ոչ ավելի քան՝

1.60 կմ/ժ արագությամբ:
2.80 կմ/ժ արագությամբ:
3.90 կմ/ժ արագությամբ:

Պատ.՝1

Այս նշանով կահավորված ճանապարհներին միջքաղաքային ավտոբուսների վարորդներն իրավունք ունեն երթեւեկելու ոչ ավել քան՝

1.60 կմ/ժ:
2.80 կմ/ժ:
3.90 կմ/ժ:

Պատ.՝3

Թույլատրվու՞մ է ուղեւորների փոխադրումը ավտոբուսի սրահում տվյալ իրավիճակում:

1.Արգելվում է:
2.Թույլատրվում է:
3.Թույլատրվում է նստատեղերի քանակին համապատասխան:

Պատ.՝1

Կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ թույլատրվու՞մ է արդյոք ուղեւորների փոխադրումը քարշակվող ավտոբուսում:

1.Արգելվում է:
2.Թույլատրվում է կոշտ կցիչով քարշակման ժամանակ:
3.Թույլատրվում է:

Պատ.՝1

Քարշակման ժամանակ քարշակվող տրանսպորտային միջոցի վրա պետք է միացված լինեն՝

1.Լապտերների հեռահար լույսերը:
2.Լապտերների մոտակա լույսերը:
3.Վթարային լուսային ազդանշանը:

Պատ.՝3

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում միջքաղաքային ավտոբուսների երթեւեկությունն ավտոմայրուղիներով:

1.70 կմ/ժ:
2.80 կմ/ժ:
3.90 կմ/ժ:
4.100 կմ/ժ:
5.110 կմ/ժ:

Պատ.՝3

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում ավտոբուսի երթեւեկությունը այս ճանապարհային նշանի ազդեցության ճանապարհահատվածներում:

1.70 կմ/ժ:
2.80 կմ/ժ:
3.90 կմ/ժ:
4.100 կմ/ժ:
5.110 կմ/ժ:

Պատ.՝3

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում միջքաղաքային ավտոբուսների երթեւեկությունն ավտոմայրուղիներով:

1.70 կմ/ժ:
2.80 կմ/ժ:
3.110 կմ/ժ:
4.100 կմ/ժ:
5.90 կմ/ժ:

Պատ.՝5

Ի՞նչ արագությամբ է թույլատրվում տրանսպորտային միջոցների երթեւեկությունը «Բնակելի գոտի» եւ «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշանների ազդեցության տարածքներում:

1.5 կմ/ժ ոչ ավելի:
2.10 կմ/ժ ոչ ավելի:
3.20 կմ/ժ ոչ ավելի:

Պատ.՝3

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում թեթեւ մարդատար ավտոմոբիլների երթեւեկությունը այս ճանապարհային նշանի ազդեցության ճանապարհահատվածներում:

1.70 կմ/ժ:
2.80 կմ/ժ:
3.90 կմ/ժ:
4.100 կմ/ժ:
5.110 կմ/ժ:

Պատ.՝5

Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրված երթևեկությունը 3,5 տոննայից ոչ ավել թույլատրելի առավելագույն զանգվածով բեռնատարի վարորդին նշված նշանների ազդման գոտում

1.Ոչ ավել քան 50 կմ/ժ
2.Ոչ ավել քան 70 կմ/ժ
3.Ոչ ավել քան 90 կմ/ժ

Պատ.՝3

Մեխանիկական տրանսպորտային միջոց քարշակելիս այս ճանապարհի ո՞ր գոտով կարող եք շարունակել երթևեկությունը

1.Միայն աջ
2.Ցանկացած

Պատ.՝1

Ի՞նչ պայմաններ պետք է հաշվի առնի վարորդը սահմանված արագությունը չգերազանցող արագությունը ընտրելիս

1.Ճանապարհային ծածկույթի վիճակը
2. Տեսանելիությունը երթևեկության ուղղությամբ
3.Նշված երկու պայմանները:

Պատ.՝3

Ի՞նչ արագություն պետք է ընտրի վարորդը թույլատրելի առավելագույնի սահմաններում

1.Տրանսպորտային միջոցի լիարժեք կառավարումը ապահովող
2.Ազատ է ընտրելու ցանկացած արագություն, որը չի գերազանցի առավելագույն թույլատրելին

Պատ.՝1

Վարորդին արգելվում է՝

1.գերազանցել տվյալ տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրով սահմանված առավելագույն արագությունը.
2.գերազանցել տրանսպորտային միջոցի վրա տեղադրված «Արագության սահմանափակում» ճանաչման նշանով նախատեսված արագությունը.
3.առանց անհրաժեշտության ընթանալ շատ ցածր արագությամբ՝ խոչընդոտելով մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությանը.
4.կտրուկ արգելակել, եթե դա անհրաժեշտ չէ ճանապարհատրանսպորտային պատահար կանխելու համար
5.Բոլոր նշված գործողությունները

Պատ.՝5

Ո՞ր նշանն է արագության սահմանափակում մտցնում:

1) 1 և 3 2) 1 և 4 3) միայն 2-ը 4) 2 և 3

1.1 և 3
2.1 և 4
3.միայն 2-ը
4.2 և 3

Պատ.՝3

Վարորդին արգելվում է

1.Երկաթուղային գծանցը հատել ավելի քան 30 կմ/ժ արագությամբ
2.Երկաթուղային գծանցը հատել պակաս 30 կմ/ժ արագությունից
3.Առանց երկաթգծի ուղեմասի պետի թույլտվության գծանցով երթևեկել դանդաղընթաց մեքենաներով՝ 8 կմ/ժ ցածր արագությամբ և տափանների հետ կցված տրակտորներով

Պատ.՝3

Խաչմերուկին մոտենալիս վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի այնպիսի արագությամբ, որ

1. Չգերազանցի տվյալ հատվածում սահմանված առավելագույն թույլատրելին:
2.Հնարավորություն ունենա կանգնելու և բաց թողնելու անցման առաջնահերթության իրավունք ունեցող փոխադրամիջոցները

Պատ.՝2

Բարձրացնել արագությունը վարորդին արգելվում է, եթե

1.Դա կխոչընդոտի իրեն վազանցող տրանսպորտային միջոցի վարորդի վազանց կատարելուն:
2.Դա անհրաժեշտ է իրեն ճանապարհը զիջելու նպատակով կանգ առած վարորդի ճանապարհը ազատելու համար:
3.Դա կատարվում է խաչմերուկն ազատելու նպատակով

Պատ.՝1

Վարորդը պարտավոր է իջեցնել արագությունը

1. «Երեխաների փոխադրում» ճանաչման նշանով կահավորված տրանսպորտային միջոցներ երեխաների նստեցման և իջեցման ժամանակ այդ տրանսպորտային միջոցներին մոտենալիս:
2.Շլանալու դեպքում
3. Երթևեկության համար խոչընդոտ կամ վտանգ առաջանալու դեպքում:
4.Կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում, ինչպես նաև կապույտ կամ կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս:
5.Բոլոր նշված դեպքերում

Պատ.՝5

Տրանսպորտային միջոցի կողքից՝ եզրաչափային լույսի արտաքին եզրից 0,5 մ դուրս ցցվելու դեպքում բեռը պետք է արդյո՞ք նշվի օրվա լուսավոր ժամերին «Մեծ եզրաչափերով բեռ» ճանաչման նշանով, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում, նաև՝ առջևից սպիտակ, իսկ հետևից՝ կարմիր գույնի լապտերիկներով կամ լուսանդրադարձիչով:

1. Այո
2.Ոչ

Պատ.՝1

Բեռնատարով, որի վարորդը ունի B և C կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական պահպանելով բեռնատարներով մարդ փոխադրելու կանոնները թույլատրվում է փոխադրել մինչև

1. 8 ուղևոր
2.9 ուղևոր
3.4 ուղևոր

Պատ.՝1

Արգելվում է մինչև 12 տարեկան երեխաներին փոխադրել

1. Կողավոր թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքում:
2.Փուրգոն թափքով բեռնատար ավտոմոբիլի թափքում

Պատ.՝1

Տրանսպորտային միջոցի հետևի եզրաչափից 1.2 մ դուրս ցցված բեռը պետք է արդյո՞ք նշվի օրվա լուսավոր ժամերին «Մեծ եզրաչափերով բեռ» ճանաչման նշանով, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում, նաև՝ առջևից սպիտակ, իսկ հետևից՝ կարմիր գույնի լապտերիկներով կամ լուսանդրադարձիչով

1.Այո
2.Ոչ

Պատ.՝1

Բեռի փոխադրումն արգելվում է, եթե այն՝

1.սահմանափակում է վարորդի տեսադաշտը.
2.դժվարացնում է տրանսպորտային միջոցի ղեկավարումը և թուլացնում կայունությունը
3.ծածկում է արտաքին լուսային սարքերն ու լուսանդրադարձիչները, համարանիշերը կամ ճանաչման նշանները, ինչպես նաև խանգարում ձեռքով տրվող ազդանշանների ընկալմանը
4.նշված բոլոր դեպքերում:

Պատ.՝4

Եթե բեռի վիճակն ու դասավորությունը հնարավորություն չեն տալիս կատարել դրա փոխադրումը կանոնների պահանջներին համապատասխան, ապա վարորդը պետք է

1.Բեռը բարեհաջող հասցնի մինչև մոտակա բեռնաթափման վայրը:
2.Վերացնի խախտումները կամ դադարեցնի հետագա երթևեկությունը

Պատ.՝2

Տրանսպորտային միջոցի հետևի եզրաչափից 0.6մ դուրս ցցված բեռը պետք է արդյո՞ք նշվի օրվա լուսավոր ժամերին «Մեծ եզրաչափերով բեռ» ճանաչման նշանով, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում, նաև՝ առջևից սպիտակ, իսկ հետևից՝ կարմիր գույնի լապտերիկներով կամ լուսանդրադարձիչով 1.Այո 2.Ոչ Պատ.՝2	Տրանսպորտային միջոցի կողքից՝ եզրաչափային լույսի արտաքին եզրից 0,3 մ դուրս ցցվելու դեպքում բեռը պետք է արդյո՞ք նշվի օրվա լուսավոր ժամերին «Մեծ եզրաչափերով բեռ» ճանաչման նշանով, իսկ օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում, նաև՝ առջևից սպիտակ, իսկ հետևից՝ կարմիր գույնի լապտերիկներով կամ լուսանդրադարձիչով: 1.Այո 2.Ոչ Պատ.՝2